

են, և ոչ միայն անդամ են: այլ և վերջին պատասն և սպարակուց յե-  
տոյ զեռ չեն յուսահատում: — Արեմն այդ օճեանկայի մէջ կամ դորանից դուրս այնու ամենայնիւ  
կայ մի բան:

— Կայ թերևս միայն թէ . . .

— Ի՞նչ . . .

— Այնքան հարկէ:

— Ինչի՞ համար:

— Այդ հարցրէք Ք. ին:

— Իսկ նորա համար կա՞յ:

— Ի հարկէ. ապա թէ ոչ նա ինչով պիտի ժեներալութիւն աներ:

— Բայց ի՞նչ պիտի անէ նա, ով այդ չունի, որի համար կեանքն յի-

րաւի ուրիշ ոչինչ չէ ներկայացնում: բայց միայն սիրտ խառնող ու չըն-

չին սոլեանկայ:

Գեղեցիկ և արտասուքից կարմրած աչքերն այս ժամանակ այնպիսի ար-

տայայտութիւն են ստանում, որից յայտնի երևում է, թէ այս վտանգն

իւրեանց համար չէ ոչ մի ղէպքում:

— Ի՞նչ պէտք է անէ: Այո, նորա բանը վատ է: նորան օգնել կա-

րելի չէ նոյն իսկ այդ ձեր ընկերութեան նպատակ: նորան մնում է յետ

քաշվել և տեղի տալ հարկաւոր ղէպքում, որ ուրիշներն իւր բաժինը

վայելն: Ցանկացողներ ի հարկէ կլինին, այս մասին խորհելն իսկ չարժէ:

Ո՞րտեղ կայ հաց, որ ուտող չունենայ:

(Թարթի.)

Ա. Մ.

ԲԻՍՈՒԹՈՒՆԻ ԲԵԻԵՌԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

ՈՐՈՆՑ ՄԷԿ ՄԱՍԸ ՀԱՅԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆԸ ԿԱԵՐԱԲԵՐԻ:

(Ուրախութեամբ կհրատարակենք մեծ. պ. Գորջեանի այս հետաքրքիր  
յօդուածը: Բիսութունեան ժայռը պատմական նշանակութիւն ունի բոլոր  
եկրօպական հնագէտների և պատմաբանների աչքին և համոզված ենք, որ  
հայրենասէր հայագէտները շնորհակալութեամբ պիտի կարդան պ. Գորջեա-  
նի ներկայ յօդուածը: Հեղինակի լեզուն առանց ուղղելու թողինք, խոնար-  
հարար խնդրելով հեղինակից միւս անգամ իւր ոճը մեր սովորական գրա-  
ւոր լեզուին յարմարեցնել փոքրիշատէ, բաց թողնելով հ. Գ., ա. Գ., Գ. Գ.,  
հ. Գ., Գ. Գ. և այլն բառերը:)

Խ. Բ.

Գօգօյն) այս խօսքն պէտք է հասկանալ իբրև «լաւ եւ վատ ամեն բաների խառ-  
նուրդ»: Վերջինեւալ գինեամբ այս կերակուրը լաւ չէր պատրաստվում: Բ. Մ.



տարածուած է: գերիներն յանդիմանելու կամ անսոց պատուէր տալու ղիրք մի ունի: Այս անձն ալ Պարեհ առաջինը կկարծուի: Պարեհն ստ- քերուէն տակ կոնակին վրայ պառկած մարդ մի կայ, որ ձեռքերն դէպի Պա- րեհ վեր երկնցրեր է: որոնք աղաչանք ընելու ղիրք մի ունին: Թագաւորի ետևը մարդ մի կեցեր է ձեռքն ազնոյ մի ունի, ստոր ետևն ալ ուրիշ մի կեցեր է ձախ ձեռքը նիզակ մի ունենալով: Ասոնք Թագաւորի զինակիր- ներն պէտքէ ըլլան:

Տախտակի զանազան կողմերն քանի մի փոքր և ձախ կողմն ալ Տինգ սիւ- նակի բաժանուած բլեռագիր արձանագրութիւններ կան:

Կոմս զը Գօրինօն այս արձանագրութիւններն շատ նեղութեամբ օրի- նակելով երկար աշխատութենէ ետքը յաջողեցաւ կարդալ կամ լաւ ևս անոնց խիստ հաւանական մեկնութիւն մի տալ, և ետքէն զանոնք տպա- գրութեամբ ալ հրատարակեց:

Անկէ ետքը Սրբ Հ. Ռօլինսըն անգլիացի հմուտ արեւելագետը Պարսկաս- տան ճանապարհորդած ատենը նորէն մեծ դժուարութեամբ ընդօրինակեց այս արձանագրութիւններն և անսոց վրայ երկար աշխատելէն ետքը զանոնք մեկնեց և տպագրութեամբ հրատարակեց:

Ռօլինսընի գործը չկրնալով ձեռք ձգել և Գօրինօի աշխատասիրու- թեան միայն մէկ մասի անգլիերէն թարգմանութիւնը, հանդերձ բլեռագիր արձանագրութիւններով և ֆրանսերէն բնագրով, որ Բօմբայ տպագրուած է Մուշեղերձի Քաբաճի Շափորձի խնամօքը, մեր ձեռքն ունենալով, հարկ եղաւ հետևեալը պարսկերէնէ թարգմանել, որն Ռօլինսընի գործէն թարգ- մանուած է:

**ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ:**

Առաջին սիւնակը կրտսիանայ 19 յօդուածէ, եւ ընդ ամենը 96 սող կպարու- նակէ:

Ա. Ես Պարեհն եմ, մեծ Թագաւոր, Թագաւորներու Թագաւոր, Պարսի Թագաւոր, հպատակներու Թագաւոր, որդի Աւշտասպա \*), Պէկիրէի, Ար- շամաի, Հաքհամանշի:

Բ. Պարեհ Թագաւորն կրտէ — Իմ հայրս Աւշտասպա էր, Աւշտասպաի հայրն Արշամա էր, Արշամաի հայրն Արեարամ, Արեարամի հայրն Չէշ- պաշէշ, անոր հայրն Հաքհամանշ:

Գ. Պարեհ Թագաւորն կրտէ — Այս պատճառով մեզ Հաքհամանշ կրսեն, որ ի հնուց երբէք չեն յաղթուած, ի հնուց անոնք, որ մեր ցեղէն եղեր են, Թագաւոր եղեր են:

Դ. Պարեհ Թագաւորն կրտէ — Ութ հոգի ինձմէ առաջ մեր ցեղէն Թա- գաւոր եղեր են և ես իններորդն եմ և երկար ժամանակ է որ Թագաւոր եմ:

(\* Աշտասպա, Այս անունն արդի որսորդի գրագէտներն Բիշթաւայ կղզեան եւ կհնչեն:



որ կամեցաւ ըրաւ և թագաւոր եղաւ։

ԺԳ. Դարեհ թագաւորն կրսէ — Ոչ դք չկար ոչ պարսացի, ոչ մարացի և ոչ մէկը մեր ցեղէն որ երկիրն Մաքացի Բեմաթաէն առնէր. բնակիչներն վախցան որ անոր դէմ կենան. քանզի անոնք (զան) չին Պարթեան կճանաչէին. (ան) յաճախ անոնց կսպառնար թէ — վախճէք մի՛ գուցէ զիս Խեբուշի որդի Պարթեան չճանաչէք. Ոչ դք չհամարձակեցաւ անոր դէմ կենալու. ամենքն ալ Մաքացի Բեմաթաի չորս կողմ ժողովուրդ էին, երբ ես հասայ, Ետքը ես Որմիզդին ծառայութիւն ըրի, և Որմիզդ ինձ օգնութիւն ըրաւ. Պարթեատէչ ամսի տասն էր որ ես ինձ հնազանդ եղողներուն միաբանութեամբն այն Բեմաթա Մաքացին սպանեցի, և այն մեծերն որ անոր ընկերներն էին Մարաստանի նէսա անունով գաւառին մէջն եղող Սէքնավաթէչ բերդին մէջ սպանեցի, և ես երկիրն անկէ (Բեմաթաէն) առի. Որմիզդի օգնութեամբ թագաւոր եղայ. Որմիզդ ինձ թագ պարգևեց։

ԺԿ. Դարեհ թագաւորն կրսէ — Այն թագն, որ մեր ցեղէն խլեր էր, ես առի, և հաստատ ըրի ինչպէս չին ժամանակներն էր. և այն ծէսերն, որ Մաքացի Բեմաթան կրօնին մէջ դրեր էր, նետեցի, և երկրին մէջ օրէնքներ և կարգեր հաստատեցի. և այն պաշտօններն, որ Բեմաթա մեր ցեղի ժողովուրդէն առեր էր, ետ դարձրի, և երկիրն հաստատուն ըրի. և Պարսն ու Մարաստանն և ուրիշ նահանգներն ինչպէս որ ի հնուց էին. և նախկին ծէսերն, որ վերցրեր էր, նորէն դրի. Այս ամենն Որմիզդի շնորհով ըրի և եղութիւն կրեցի մինչ մեր ցեղն հաստատուն եղաւ. ինչպէս չին ատեններն էր. Եւ Որմիզդի օգնութեամբ նեղութիւններու տարայ, որպէս զի Մաքացի Բեմաթան մեր ցեղին չկարենայ յաղթել։

ԺԵ. Դարեհ թագաւորն կրսէ — Ասոնք են որ թագաւոր ըլլալէս ետքը ըրի.

ԺԶ. Դարեհ թագաւորն կրսէ — Երբ որ Մաքացի Բեմաթան սպանեցի, Ափատարմաի որդի Էթրինա անուն անձ մի վեր կեցաւ և Օվճէճէի երկրին այսպէս ըսաւ — Ես Օվճէճէի թագաւորն եմ. ուրեմն Օվճէճէի ժողովուրդն ապստամբեցաւ և Էթրինաի կողմն անցաւ և ան Օվճէճէի թագաւորն եղաւ. Եւ Էպնաի որդի Պէթրա անուն Բարեւացի մարդ մի վեր կեցաւ և Բարիլոն երկրին սուտ ըսաւ — Ես նապուխ Էտրիսերա եմ որդի նապունիթաի. և Բարեւաստանը բոլորովին նէթի Պէթրաի կողմն անցաւ, և Բարիլոն ապստամբեցաւ, և ան Բարիլոնի թագը գրաւեց։

ԺԷ. Դարեհ թագաւորն կրսէ — Անկէ ետքը ես Օվճէճէ խրկեցի և այն Էթրինան կապած իմ առջևս բերին, և ես զան սպանեցի։

ԺԸ. Դարեհ թագաւորն կրսէ — Անկէ ետքը ես Բարիլոն գնացի, այն նէթի Պէթրան, որ նապուխ Էտրիսերա անուն ասեր էր, Տիգրիս գետի մօտ եկեր էր, նաւեր ունէր, եւ գետն անոր զօրքի ձեռքն էր. Այնուհետեւ ես զօրքս նաւակներու մէջ նստեցրի և թշնամին նեղը ձգեցի և թշնամուն վրայ յարձակեցայ. Որմիզդ ինձ օգնութիւն ըրաւ. Որմիզդի օգնութեամբ Տիգրիսէն անցայ, անկէ ետքը նէթի Պէթրաի զօրքը բոլորովին ջարդեցի. Էսթրիաթէպէ ամսի քսանեօթերորդ օրն էր որ այս պատերազմն ըրինք։

ԺԹ. Դարե՛հ թագաւորն կըսէ — Անկէ ետքը Բարիլոն գնացի, երբ մեր-  
ձեցայ Բարիլոնի Չալանա քաղաքին, որ Եփրատ գետի եզրը կգտնուէր,  
հոն Նէթի Պէթիրան, որ Նապուխ Էտրիսերա անունն առեր էր, զօրքով  
իմ դէմ ելաւ որ պատերազմ ընէ, հոն պատերազմ ըրինք, Արմիզդ ինձ  
օգնեց, և Արմիզդի օգնութեամբ Նէթի Պէթիրաի զօրքը բոլորովին ջար-  
գեցի և թշնամին ջրի մէջ ձգեցի, և ջուրն թշնամին սպանեց, Էնէտաքա  
ամօտի երկրորդ օրն էր որ այս պատերազմն ըրինք:

Երկրորդ սինակը կրտսկանայ 16 յօդուածէ եւ ընդ ամենը 96 տող կպարունակէ:

Ա. Դարե՛հ թագաւորն կըսէ — Անկէ ետքը Նէթի Պէթիրան իրեն հնա-  
զանդ եղող ձիաւորներով Բարիլոն փախաւ: Ես Բարիլոն գնացի, Բարի-  
լոնն առի և Նէթի Պէթիրան Բարիլոնի մէջ սպանեցի:

Այն յօդուածներու յանդիման, ուր Հայերու կամ Հայաստանի անունը  
յիշուած է, զը Գօբինոի տուած մեկնութիւնը ֆրանսերէնէ թառ առ թառ  
թարգմանելով զնեյն աւելորդ չեմ համարեր:

Գը Գօբինոի տուած մեկնութիւնը:

Բ. Դարե՛հ թագաւորն կըսէ —  
Երբ Բարիլոն էի ասոնք են երկիր-  
ներն որ ինձմէ ապստամբեցան —  
Պարս, Օվճէհէ, Մարաստան, Ա-  
սորեստան, Էրմէնա, Փարսովա,  
Մարաբուշ\*), Սաթաբուշ, Սաքա,  
ապստամբած գաւառներն եղան Պարսին մէջ ետ-  
քը Սուսիանիաին, ետքը Մարաց,  
ետքը Ասորեստանին, ետքը Հայե-  
րուն, ետքը Պարթևներուն, ետքը  
Մարկիացիներուն, ետքը Սաթա-  
կիացիներուն, ետքը Սկիւթացիներ-  
ուն:

Գ. Դարե՛հ թագաւորն կըսէ — Չէչէք Հերաքըի որդի Մարթեա անունով  
մարդ մի, որու ձեռքն էր Պարսի քաղաքներէն Չօքանաքա քաղաքը, վեր  
ելաւ և Օվճէհէի երկրին այսպէս ըսաւ — Ես Ումանշըն եմ թագաւոր Օվ-  
ճէհէի:

Դ. Դարե՛հ թագաւորն կըսէ — Այն ժամանակ ես Օվճէհէի կողմերն գնա-  
ցի. Օվճէհէի ժողովուրդն ինձմէ վախցան և Մարթեան, որ անոնց մեծն էր,  
բռնեցին ու սպանեցին:

Ե. Դարե՛հ թագաւորն կըսէ — Մարաստանի բնակիչներէն Քէրաւարէթշէ  
անունով մարդ մի վեր ելաւ Մարաց երկրին այսպէս ըսաւ — Ես Շասրթեան  
եմ Օվքէշթէրէհի ցեղէն, անկէ ետքը Մարաց զօրքն, որ (իր) հայրենիքի մէջ  
էր, ինձմէ ապստամբեցաւ Քէրաւարէթշէի կողմն անցաւ, ան Մարաստանին  
թագաւոր եղաւ:

(\*) Մարկիանիա:

2. Դարե՛հ թագաւորն կրսէ — Պարսի և Մարաց զօրքերն, որ իմ մօտս էին, ինձ հնազանդ մնացին: Այն ատեն ես այն զօրքերն դուրս խրկեցի և Պարսի բնակիչներէն Վէրարնա անունով մէկն, որ իմ ծառաներէս էր, հրամանատար ըրի և զօրքերուն ըսի — Բաղդը ձեզ օգնական ըլլայ, այն երկիրն որ զիս չճանաչեր զարկէք: Ետքը Վէրարնա զօրքերով մեկնեցաւ, երբ Մարաստանի Մարա (կամ Մէրէ) քաղաքին մօտ (հասաւ): Մարաց ժողովուրդին հետ պատերազմեց: Այն որ Մարաց մեծն էր ոչ մէկ կերպով չկրցաւ Վէրարնաին դէմ դնել: Որմիզդ մեզ օգնութիւն ըրաւ: Որմիզդի օգնութեամբ Վէրարնաի զօրքերն ապստամբ զօրքը բոլորովին ջարդեցին: Էնմաքա ամսի վեցերորդ օրն էր որ այս պատերազմը տեղի ունեցաւ: Ետքը իմ զօրքս իմ հրամանով Քափատա, Մարաց քաղաքներէն մէկին մէջ մնաց, մինչ ես ինքս Մարաստան հասայ:

Է. Դարե՛հ թագաւորն կրսէ — Այնուհետև Տարավէշէշ անունով հայն, իմ հրամանատարներէն մէկը, Հայաստան խրկեցի ու անոր ըսի — Բարեբաղդ ըլլաս ապրստամբ երկիրն որ ինձ չհնազանդեր զարկ: Ետքը Տարավէշէշ գնաց, երբ Հայաստան հասաւ ապստամբներն ժողովուեցան և ճակատ յարդարելով Տարավէշէշի դէմ ելան: Հայաստանի զիւղերէն մէկին մօտ պատերազմը տեղի ունեցաւ: Որմիզդ ինձ օգնութիւն ըրաւ: Որմիզդի օգնութեամբ իմ զօրքս ապրստամբ զօրքը բոլորովին կոտորեց: Սարավահրա ամսի վեցերորդ օրն էր որ այս պատերազմն եղաւ:

9. Ետքը Դարե՛հ թագաւորն կրսէ — Թէթէրս \*) անունով մեծահոգի (illustre) հայն իբր խոռովութեան գործակալ (commissaire) հայերու դէմ հանեցի, ան վերահաստատեց օրէնքի իշխանութիւնն ապստամբներուն վրայ: ժողովուրդներն, վատահամբաւուած իրենց ստութիւններովը, նկատեցին իրենց փախուստի արագութեան տեսարանը:

10. Ապա Թէթէրս փութացաւ, սարսափ տանելով Հայերու երկիրըն. վատանուննիրուն մէջ շարութեան զրդումը գործելով. խորտակող, կտրող Թէթէրսին յանձնարեցի խաղաղութիւնը վերահաստատել: Ապա Թէթէրսին յանձնարեցի գործել Էսեսմ (Փր. մէջ Esesmes, անգլ. մէջ Aschnebeh) կոչուած անտառին մէջ. Հայերու երկիրն մէջ, ան պետ եղաւ. և Որմիզդ անոր ընկեր եղաւ: Որմիզդ զան պաշտպանելով, ստախօս բը-

(\*) Իմանալու է, որ այս բեւեռագիր արձանագրութիւններուն մէջ ամենադժուար ընթեռնելներն եւ երկբայելիներն յատուկ անուններն են, որոնց ընթերցման դժուարութիւնը, կարծեմ, այն պատճառով է որ պարսկերէնին մէջ ձայնաւոր գրերու փոխարէն միայն նշաններ կգործածուին եւ որոնք ալ չեն դրուիր. սլլ զօրութեամբ կիմացուին:







ցեք, ապստամբ երկիրն զարկէք, ետքը Ինամա Ափարա զօրքով գնաց  
Զէթրաթէխման հետ պատերազմ ըրաւ. Արմիզդ ինձ օգնեց, Արմիզդի օգ-  
նուածեամբ իմ զօրքս կոտրեց ապստամբ զօրքը և Զէթրաթէխման բռնելով  
իմ առջևս բերին, և անոր ականջներն ու քիթը կտրեցի և զան իմ արքու-  
նիքս բերի, անոր վիզը շղթայ զրի, բոլոր երկիրն զան տեսաւ և ետքը զան  
էրպէրա քաղաքին մէջ կախադանէ կախեցի:

ԹԵ. Դարեհ թագաւորն կրտսէ — Այս գործը Մարաստանին մէջ ըրի:

ԹԶ. Դարեհ թագաւորն կրտսէ — Փարսըվա և Վերկանա (Հիրքանիա) ինձ  
դէմ ապստամբեցան. Բերավարէթշէի կողմն անցան, Փարսըվաի զօրքն  
ապստամբեցաւ Վէշտասպակն, որ իմ հայրս էր. ետքը Վէշտասպա իրեն  
հնազանդ եղող զօրքով Վէսփայշտեաի, Փարսըվաի քաղաքներէն մէկիդ  
մէջ ապստամբներուն հետ պատերազմեց. Արմիզդ անոր օգնեց. Արմիզդի  
օգնութեամբ Վէշտասպա ապստամբ զօրքը բոլորովին կոտրեց. Վէսփայթաի  
քսաներկրորդ օրն էր որ այս պատերազմն եղաւ. (ԿԶ-ԲՈՆ-ԻԿԷ):

Թաւրիզ:

Ն. ԳՕՐՕՅԵԱՆ:

ՀԱՆԱՊԱՐՀՈՐԳՈՒԹԻՒՆ Ի ՆԱՀԱՆԳՆ ԿԱՐՈՒՑ.

(ԱՐԱՐԱՏ, յունիս):

Կարողիկոսարան Արգինայի. Տարօնեցւոյն վերոյգրեալ հատուածն և Մա-  
թէոսի ուրիշ մի հատուածն \*) զոր Վահան Կաթողիկոսի ընտրութեան  
մասին կը յիշէ, կը հաւատեն մեզ, թէ Թ. դարու սկիզբներում կամ գո-  
նէ կէսումն Հայոց Կաթողիկոսարանը փոխադրուած էր յԱրգինայ, որոյ  
մասին մինչև մեր օրերն պատմական գրուածքներու մէջ շատերն Չամչեան  
պատմութեանն հետեւելով կը սխալին. զոր օրինակ Սալլանթեանն իւր  
համառօտ պատմութեան ցուցակին մէջ այսպէս կը յիշէ.

« Աթոռն Կաթողիկոսական (յամին 924) փոխադրի ի Գունայ ի Վաս-  
պուրական, ուր և մնայ զամս 70. • այսինքն ցամն 994, Բայց մենք վերոյ  
գրեալ պատմական հատուածներով կը տեսնեմք որ Կաթողիկոսարանն  
յԱրգինայ փոխադրուած էր արդէն գոնէ Անանիա Կաթողիկոսի վերջին  
օրերումն, որոյ մահն ու թաղումն այն տեղ կը ցուցնէ Տարօնեցին, և Վա-  
հանայ ընտրութիւնն ու յաջորդութիւնն այնտեղ լինել կը հաստատէ Առ-  
հայեցին, Իսկ Սալլանթեան ինքն իսկ Անանիայի Կաթողիկոսութիւնը  
կը գնէ 943—963 թուականներն: Ապա ուրեմն սխալ կը լինի այն յօ-  
դուածն, որ կասէ թէ 924 ին փոխադրեցաւ աթոռն ի Վասպուրական. և

(\*) « Արդ ի յայտ ամի (Նիէ) նստաւ յաթոռ հայրապետութեան Հայոց տէր Վա-  
հան ի մեծն Արգինայ, հրամանաւ Անանիայի, Տովհաննիսի եւ Աշոտայ Հայոց թագա-  
ւորացն »: Մատթ. Ի: